



235 C

ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA, 630 SECOND AVENUE, NEW YORK, N. Y. 10016 • 212 686-0710

Archbishop Torkom Manoogian, Primate

Թիւ 23895
Փետրուար 23, 1978

Արժանաշնորհ
Տ. Բարզէն Ա. Քհնյ. Մագսուտեան
Հովիւ Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ
Սախազահ Ժխական Խորհուրդի
Քէյմպրիժ.

Սիրելի Տէր Բարզէն,

Ստացած ենք 1978 Փետրուար 14 թուականի Ձեր տեղեկագիրը, որով կը
հաղորդէք թէ Ձեր նախագահութեամբ Փետրուար 4ին գումարուած համայնքիդ
Ժխական Ժողովին մէջ կատարուած է Ժխական Խորհուրդի վեց անդամոց (եր-
տարուան համար) եւ երկու անդամոց (մէկ տարուան համար) ընտրութիւնը,
եւ ներկայացնելով քուէարկութեան արդիւնքը, կը խնդրէք ընտրուած ան-
ձեր վաւերացման պաշտօնագիրը:

Մկատի ունենալով որ Ձեր Ժխական Ժողովը տեղի ունեցած է թեմական
կանոնադրութեան տրամադրութեան համաձայն, այսու կը վաւերացնենք
Ժխական Խորհուրդի նորընտիր անդամները, ըստ ստորեւ տրուած ցանկին:

Հաճեցէք փութով Առաջնորդարան ղրկել Ժխական Խորհուրդի նորընտիր
Դիւանի անդամոց անունը, հասցէն եւ հեռաձայնի թիւը:

Օրհնելով Ժխական Խորհուրդի նոր կազմը, կը մաղթենք Ձեզի եւ Ձեր
պաշտօնակիցներուն յաջող եւ արդիւնաւոր գործունէութեան տարի մը, ի
պայծառութիւն Ս. Եկեղեցւոյդ եւ ի հոգեւոր շինութիւն համայնքիդ մեր
սիրեցեալ ժողովուրդին:

Սիրոյ ողջունել

ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ

Տիրան Զահիկեան
Արթըր Ա. Արզարեան
Տքթ. Մայքըլ Խուլիկեան
Իիշրոտ Ջէյթունեան
Կրէկըրի Պ. Խաչատուրեան
Քամրս Ստեփանեան

Տքթ. Արթըր Փերեցեան՝ մէկ տարի
Ճէրրի Օտապաշեան՝ մէկ տարի